

## ԿԱՐԾԻՔ

### ԱՆԻ ՊԵՏՐՍ-ԲԱՐՑՈՒՄԻԱՆԻ՝

«ԳՐԱԿԱՆ ՄԻՍՏԻՖԻԿԱՑԻԱ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ  
ՌՈՒՍԱԿԱՆ ՍԻՄՎՈԼԻԶՄԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ

Անի Պետրս-Բարցումիանի ատենախոսական աշխատանքը նվիրված է գրականագիտության յուրօրինակ, բարդ և բազմաշերտ թեմայի՝ գրական միստիֆիկացիայի ուսումնասիրությանը: Հետազոտության կոնկրետ առարկան ուսական սիմվոլիզմի գրականության նմուշներն են: Սակայն նման վերլուծությունը հնարավոր է միայն գրական միստիֆիկացիայի բուն երևույթի գիտական, ընդհանրացված բնութագրումից, ինչպես նաև համաշխարհային գրականության մեջ դրա զարգացումը թե՛ ժամանակային և թե՛ գաղափարա-գեղարվեստական տեսանկյունից ներկայացնելուց հետո: Եվ այս հարցերը հանգամանորեն լուսաբանված են ատենախոսության «Ներածության» մեջ:

Այստեղ բացահայտված է երևույթի բնույթը և ներկայացված է գրական միստիֆիկացիայի պատմական ակնարկը համաշխարհային գրականության մեջ. նշված են դրա ծաղկման ժամանակաշրջանները (Վերածննդի դարաշրջան, XVIII դար Եվրոպա, XIX դար Ռուսաստան և այլն), ինչպես նաև համառոտակի բնութագրված են որոշ ստեղծագործություններ: Նշված են նաև հայ հեղինակներ, ովքեր ստեղծագործել են այլ անունների տակ: Այդ թվում Ղևոնդ Ալիշանը՝ «Նահապետի երգեր» շարքի հեղինակը, Միքայել Նալբանդյանը, ով հաճախ տպագրվել է «Կոմս Էմանուել» անվամբ:

Ներկայացված են գրական միստիֆիկացիայի օրինակներ նաև խորհրդային շրջանից: Օրինակ՝ հայտնի ոուս բանաստեղծ Միխայիլ Սվետլովը իր 1932 թ. ժողովածուում ընդգրկել է «Ա. Մկրտչյանցի» անունով միավորված բանաստեղծություններ՝ իբր հայերենից թարգմանված, այնինչ հայերը այդպիսի բանաստեղծ չեն ունեցել: Հիշատակված է նաև հայ բանաստեղծ Ազատ Վշտունին...

Նշելով, որ գրական միստիֆիկացիաների ուսումնասիրությունը հնարավոր է տարբեր տեսանկյուններից և թվարկելով դրանց վերլուծության տարբեր հայեցակարգերը՝ Անի Պետրս-Բարցումիանը «Ներածություն»-ում սահմանում է իր աշխատանքի նպատակներն ու խնդիրները: Անդրադառնալով «թեմայի մշակվածության աստիճանին» (էջ 10), նա ծանոթագրություններում մեջբերում է

գիտական աշխատություններ ոչ միայն ռուսերեն, այլ նաև անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն:

Ուզում եմ ընդգծել, որ օտար լեզուներով տարբեր հոդվածների և հետազոտությունների հղումները բնորոշ են ոչ միայն Ներածությանը, այլ նաև ատենախոսության հետագա ողջ տեքստին: Օգտագործված գրականության ցանկը ներառում է 275 աղբյուրներ: Սա, անկասկած, վկայում է հեղինակի գիտական լայն աշխարհայացքի մասին և աշխատանքի անվիճելի արժանիքներից մեկն է:

Ատենախոսության առաջին հիմնական գլուխը՝ «Գրական միստիֆիկացիան գրականության տեսության համատեքստում» (էջեր 20-72), ունի բացառապես տեսական բովանդակություն: Այս գլուխն առանձնանում է հեղինակի կողմից ռուսումնասիրված տարբեր դարաշրջանների և տարբեր լեզուներով նյութերի առատությամբ: Այն բաղկացած է վեց ենթաբաժիններից:

Այստեղ քննարկվում են հարցեր, որոնք առնչվում են բուն տեքստը՝ որպես գրական միստիֆիկացիա բնութագրելուն, գեղարվեստական հնարանքի և միստիֆիկացիայի միջև սահմանների որոշմանը, ինչպես նաև «միստիֆիկացիա» և «կեղծիք» հասկացությունների տարանջատմանը: Քննարկվում են «միստիֆիկացիա» տերմինի պատմության հետ կապված խնդիրներ, որոնք ծագել են Ֆրանսիայում Լուսավորության շրջանում, ինչպես նաև այդ տերմինի կիրառման սահմանները տարբեր դարաշրջաններում, տարբեր երկրներում և տարբեր բնագավառներում (գրականություն, փիլիսոփայություն, կրոն և այլն):

Պետրս-Բարցումիանը լուսաբանում է «միստիֆիկացիա» տերմինի կիրառության պատմությունը ռուսական հրապարակումներում, բացահայտում դրա տարբեր նշանակությունները: Իսկ բուն «գրական միստիֆիկացիա» տերմինը, ինչպես նշում է ատենախոսը, «Ռուսաստանում հաստատվում է միայն XX դարում» (էջ 24), մասնավորապես՝ 1930 թվականին: Բնութագրված են ռուս հեղինակների աշխատանքները 1940-ական, 1960-ական և հետագա տարիներին (տե՛ս էջեր 24-26):

Ներկայացվում է և գրական միստիֆիկացիայի բնութագիրը արդեն մեր՝ XXI դարի բառարաններում և հանրագիտարաններում՝ ռուս գրականության օրինակներով (էջեր 26-28), ինչպես նաև հայկական բառարաններում (էջեր 28-31): Նշենք, որ ատենախոսը առաջարկում է և գրական միստիֆիկացիայի իր սեփական սահմանումը:

Այս գլխում քննարկվում է տեսական կարևոր մի հարց. ինչպիսի՞ն է գրական միստիֆիկացիայի տարբերակումը հարակից հասկացություններից՝ կեղծիքից, նմանակումից, ոճավորման ձևից, պարոդիայից, գրագողությունից և այլն (էջեր 31-37): Առանձին բաժին է նվիրված «միտք», «արարողություն», «երագ», «մահ», «խաղ»

կատեգորիաների բնութագրմանը գրական միստիֆիկացիայում: Այս բաժինը նույնպես հարուստ է գիտական աղբյուրների հղումներով, այդ թվում՝ ժամանակակից, ինչը կրկին վկայում է, որ ատենախոսը խորությամբ ուսումնասիրել է թեմային առնչվող գրականագիտական նյութերը:

Առաջին գլխի «Գրական միստիֆիկացիայի ժանրային բնույթի խնդրի մասին» բաժինը հատկապես կարևոր է, քանի որ այն բավականին բարդ է. նման ստեղծագործությունները կարող են գրվել ամենատարբեր ժանրերով և ձևերով: Ատենախոսը նշում է միստիֆիկացիայի բազմազան ձևերը և դրանց ժանրային սահմանման բարդությունները: Պետրս-Բարցումիանի այն եզրակացությունը, որ գրական միստիֆիկացիան հնարավոր չէ դիտարկել որպես առանձին ժանր կամ նույնիսկ մետաժանր (էջ 49), մեզ թվում է լիովին համոզիչ:

Գլխի ամենամեծ բաժնում «Միստիֆիկացիաների տիպաբանությունը» (էջեր 49-63), ներկայացված են դրա տարբեր տեսակներ, որոնք վերաբերում են գրականությանը: Դրանց թվում են՝ մետամիստիֆիկացիան (այստեղ որպես օրինակ նշվում է Ալիշանի «Նահապետի երգերը»), կեղծ կենսագրություններ և կեղծ թարգմանություններ՝ տարբեր ժամանակաշրջանների համաշխարհային գրականությունից: Մանրամասնորեն ներկայացված է Ջեյմս Մաքֆերսոնի միստիֆիկացիան: Հեղինակը XVIII դարի 60-ականներին անգլերենով գրել է պոեմներ՝ ներկայացնելով դրանք որպես հին կելտական բանաստեղծ Օսիանի թարգմանություններ (էջեր 56-58): Բերվում են և այլ օրինակներ: Միստիֆիկացիաների տիպաբանությունը ներկայացված է նաև հատուկ սխեմայով (էջ 63):

Աշխատանքի առաջին գլուխը եզրափակում է «Հեղինակի կերպարը և անվան պոետիկական գրական միստիֆիկացիայում» բաժինը (էջեր 63-72): Անդրադառնալով հարցը քննարկած գրականագետների ուսումնասիրություններին՝ ատենախոսը Օ. Օայմուխինայի առանձնացրած հեղինակային դիմակի գործառույթի երեք ձևերից բացի նշում է նաև Յու. Շուտովայի առաջադրած ևս մեկ ձև (էջ 67): Միստիֆիկացիայի հեղինակի նոր անուն ընտրելու Ի. Պոպովայի նշված տեսակներին ատենախոսը ավելացնում է ևս մեկը՝ իր սեփականը, ինչը, անկասկած, վկայում է հարցի նրա ինքնուրույն մեկնաբանման մասին:

Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է ռուսական սիմվոլիզմի գրականության մեջ միստիֆիկացիայի ուսումնասիրությանը: Ներկայացվում է ռուսական սիմվոլիզմի պատմությունը, դրա ծաղկումը XX դարի սկզբին: Բնութագրվում է առասպելի նշանակությունը և դրա դերը սիմվոլիստական հոսանքի մեջ: Այս համատեքստում հիշատակվում են այնպիսի հայտնի սիմվոլիստներ, ինչպիսիք են Վյաչ. Իվանովը, Վլ.

Սուրվյովը, Վ. Բրյուսովը, Ա. Բելին և ուրիշներ: Նշվում են սիմվոլիստների կողմից առասպելների օգտագործման տարբեր ձևերը:

Մանրամասնորեն բացահայտվում է Անդրեյ Բելու «առասպելաստեղծում – բառաստեղծում – կենսաստեղծում» երրորդությունը: Հղում կատարելով սիմվոլիստների և տարբեր տարիների գրականության տեսաբանների աշխատություններին՝ ատենախոսը բացահայտում է ռուսական սիմվոլիզմի ընդհանուր բնորոշ գծերը՝ առանձնացնելով լեզվի յուրահատկությունները, բառաստեղծումը և այլն: Հետաքրքիր են ներկայացված Վալերի Բրյուսովի մտքերը պոեզիայի բառի մասին (էջ 80):

Գլուխը աչքի է ընկնում ռուս սիմվոլիստների գրական միստիֆիկացիաների կոնկրետ վերլուծությամբ: Մանրամասն լուսաբանված են Վալերի Բրյուսովի միստիֆիկացիաները, ինչպես նաև երկեր՝ տպագրված Չերուբինա դե Գաբրիակ անունով, որոնց հեղինակներն էին Ելիզավետա Դմիտրիևան և Մաքսիմիլիան Վոլոշինը:

Ելիզավետա Դմիտրիևայի անունը կարևոր տեղ է զբաղեցնում նաև այս գլխի հաջորդ բաժնում. նվիրված միստիֆիկացիայի վերլուծությանը, որի հեղինակներից մեկն էր Դմիտրիևան: Դա նրա և չինագիտության մասնագետ Յուլիան Շուցկու համատեղ ստեղծված բանաստեղծությունների շարք է: Բաժինը վերնագրված է. ««Տանձենու տակի տնակը» Լի Սյան Չզի – կեղծ-չինական կեղծ թարգմանություն...»:

«Հին չինական պոեզիայի հիմնական մոտիվներից մեկը՝ վտարման մոտիվը, դարձել է նաև «Տանձենու տակի տնակը» ստեղծագործության կենտրոնական մոտիվը», – գրում է ատենախոսը (էջ 101) և բերում բազմաթիվ օրինակներ շարքից՝ նշելով, որ այդ մոտիվը բնորոշ է նաև ռուսական սիմվոլիզմին: «Կեղծ թարգմանության մեջ, – նշում է նա, – անսպասելի զուգահեռ են ստեղծում ինչպես չինական, այնպես էլ սիմվոլիստական մշակույթներին բնորոշ կերպարները, թեմաները և սյուժեները» (էջ 102):

Դիտարկվում է նաև բանաստեղծական այս շարքում գույնի դերը սիմվոլիզմի պոետիկայի համատեքստում: «Տանձենու տակի տնակը, – նշում է Պետրու-Բարցումիանը, – կեղծ թարգմանություն է, որտեղ համակցվում են և՛ հորինված չինական պոետի հեղինակային ես-ը, և՛ Դմիտրիևայի քնարական ես-ը, որը սեփական կենսագրությունը վերածում է բանաստեղծական տեքստի» (էջ 107): Ատենախոսության եզրափակիչ՝ «Եզրակացություն» բաժնում (էջ 140) նշվում է. «Չինական և սիմվոլիստական մշակույթներում գույնի, հայեցակարգերի և մանրամասների խորհրդանիշների համեմատական վերլուծությունը հանգեցրեց այն եզրակացության, որ Դմիտրիևան, շարքը ռճավորելով, ստեղծում է ռուսական սիմվոլիզմի ավանդույթում ինքնատիպ մի ստեղծագործություն»:

Գլխի հաջորդ երկու բաժինները նվիրված են Ալեքսանդր Բեկլեմիշևին: Առաջին բաժնում ներկայացվում են տեղեկություններ Սամուիլ Կիսինի մասին, ով հանդես է եկել «Մունի» կեղծանվամբ: Հեղինակը անդրադառնում է Կիսինի գեղագիտական հայացքներին, ինչպես նաև Խողասևիչի և Կիսինի ստեղծագործության ընդհանուր մոտիվներին: Հետագայում Կիսինը դիմում է միստիֆիկացիայի՝ տպագրվելով «Ալեքսանդր Բեկլեմիշև» անունով:

Առաջին ենթաբաժնում պարզաբանվում են Կիսինի (Մունիի)՝ Բեկլեմիշև կերպարի մեջ ներգրավման պատճառներն ու նպատակները: «Ալեքսանդր Բեկլեմիշևի կերպարի մեջ մուտք գործելու փորձը պարզապես գրական խաղ չէր,– նշում է ատենախոսը,– դա ստեղծագործական կյանքը վերափոխելու, բնության օրենքներին միջամտելու և դրանք փոխելու միջոց էր» (էջ 110):

Նույն բաժնում հետազոտվում է կապը Բեկլեմիշևի անունով տպագրված մի շարք բանաստեղծությունների և Վլադիմիր Խողասևիչի պոեզիայի որոշ նմուշների միջև:

Երկրորդ ենթաբաժինը նվիրված է Կիսինի (Մունիի)՝ Բեկլեմիշևի միստիֆիկացիաների նմուշների վերլուծությանը: Դրանք են՝ «190\* թվականի ամռանը» վիպակը և «Սեր» շարքի երկու բանաստեղծություններ: Բացահայտվում են վիպակի յուրահատկությունները: Սիմվոլիզմին բնորոշ երկվության մոտիվը ատենախոսը առանձնացնում է որպես այս երկի հիմնական մոտիվներից մեկը: Երկակի է, ինչպես նշում է հեղինակը, նաև գլխավոր հերոսուհու կերպարը (էջ 121): Այս մոտիվը համոզիչ վերլուծված է աշխատանքում (էջեր 119-123): Իսկ «Սեր» շարքի բանաստեղծությունները դիտարկվում են և՛ որպես թեմատիկ ու կերպարային առումով փոխկապակցված, և՛ որպես պատմվածքի հետ սերտորեն կապված: Պետրոս-Բարցումիանը կապ է գտնում բանաստեղծությունների և վիպակի միջև անգամ ութմի մակարդակում՝ բերելով առանձին օրինակներ (էջեր 126-127):

Երկրորդ գլխի եզրափակիչ բաժնում համեմատվում են Կիսինի (Մունիի) տեքստերը իր գրական միստիֆիկացիաների հետ՝ գրված Բեկլեմիշևի անունով: «Մունիի բանաստեղծությունները հետևում են սիմվոլիստների ավանդույթներին» (էջ 132),– նշում է ատենախոսը: Իսկ «Բեկլեմիշևի բանաստեղծությունները,– գրում է նա,– ավելի մոտ են XIX դարի ռուսական քնարերգության ռոմանտիկ ավանդույթին» (էջ 134): Այս դիտարկումներն ամրապնդվում են տարբեր օրինակներով: «Այսպիսով, Մունին, որը ամբողջությամբ պատկանում էր սիմվոլիստական մշակույթին ու գրական ավանդույթին և ներառված էր դրա մեջ, 1907-1908 թթ. կառուցում է այլ հեղինակային «ես», վերականգնում է ռոմանտիկ գրողի սուբյեկտայնությունը» (էջ 134-135) – նշում է

ատենախոսը: Այս եզրակացությունը նա հիմնավորում է բաժնում ներկայացված՝ Մունիի և Բեկեմիչևի հաճախականությունների բառարանի միջոցով (էջ 143-144):

Եվ «Եզրակացություն» բաժնում ընդհանրացվում են թեմայի ուսումնասիրության ընթացքում արված եզրակացությունները:

Որևէ լուրջ թերություն այս աշխատանքում ես չեմ հայտնաբերել: Ուզում եմ միայն նշել, որ, իմ կարծիքով, երկրորդ գլխի առաջին բաժնի «Կենսաստեղծում» մասում չափազանց մանրամասն է ներկայացված Նինա Պետրովսկայայի սիրային հարաբերությունների պատմությունը Կոնստանտին Բալմոնտի, Անդրեյ Բելու և Վալերի Բոյուսովի հետ: Կարելի էր նշել միայն փաստը՝ որպես կենսաստեղծման բնորոշ օրինակ, և հղում անել օգտագործված գրականությանը: Իսկ ատենախոսությունում այս թեմային նվիրված է 5 էջ (էջեր 86-90):

Ընդհանուր առմամբ, աշխատանքի գիտական արժեքն անկասկած է: Ատենախոսությունը վկայում է հեղինակի գրականագիտական լայն հեռանկարի, նրա ինքնուրույն մտքերի, դիտարկումների և եզրակացությունների մասին: Ուզում եմ ավելացնել նաև, որ ատենախոսության «Սեղմագրում» նշված տվյալ թեմայով հրապարակված 10 հոդվածները, որոնք սկիզբ են առնում 2014 թվականից, գերազանցում են գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ստանալու պահանջները: Աշխատանքի սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Ուստի միջնորդում եմ Երևանի պետական համալսարանի՝ «Գրականագիտություն 012» մասնագիտությամբ գիտական խորհրդին Անի Պետրոս-Բարցումիանին շնորհել իր հայցած գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ջանփոլադյան Մագդալինա Գեորգիի

27. 11. 2024

պրոֆ. Վ. Գ. Իսահայանցյանը ստորագրում է

Երևանի պետ. համալսարանի պրոֆ. Իսահայանցյան

